

oead

appear

#277



Մասնակցային մոտեցմամբ Էկոհամակարգային ծառայությունների գնահատում՝ Հայաստանի ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակով (EcoServ) Համագործակցություն Ավստրիայի և Հայաստանի միջև

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐ

Ass.Prof. Dipl.-Ing. Dr.

Վերենա Ռադինգեր-Փիիր

ՀԱՄԱՎԱՐԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վիեննայի Բնական Ռեսուրսների և Կյանքի

Մասին Գիտությունների Համալսարան

(BOKU)

ԳՈՐԾԸՆԿԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի Պետական Համալսարան (ԵՊՀ)

ԳԱԱ Կենդանաբանության և

Հիդրոէկոլոգիայի Գիտական Կենտրոն(ԿՀԳԿ)

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿԻՐ

Հայաստան

ՆԱԽԱԳԾԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

1 Մարտ 2023 – 28 Փետրվար 2027

(48 ամիս)

ԿԱՊ

verena.radinger-peer@boku.ac.at

ԿԱՅՔԷԶ

appear.at/ecoserv

Նախագիծը ֆինանսավորվում է «Բարձրագույն

կրթության և հետազոտության զարգացման

Ավստրիայի գործընկերության ծրագիր» APPEAR -ի

կողմից: APPEAR-ը OeAD-ի կողմից իրականացվող

Ավստրիական զարգացման համագործակցության

(ADC) ծրագիր է:

Բնակչության բարձր խտության, մաքրման կայանների սակավության և կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում Հայաստանի ջրային Էկոհամակարգերը ունեն խոցելիության բարձր մակարդակ: Երկրում առկա բարձր ջրային սթրեսը բացասաբար է անդրադառնում նաև գետավազաններում տեղակայված համայնքների վրա, քանի որ գյուղատնտեսությունը մեծապես կախված է ոռոգման ջրի առկայությունից: Ավելին, Հայաստանի համար յուրտային մարտահրավերներից են Էկոհամակարգային ծառայությունների կառավարման օրենսդրական ու կրթական բացերը:

Նշված խնդիրների համար կայուն և հասցեական լուծումներ գտնելու համար EcoServ ծրագրի գործընկերները կիրառում են մասնակցային մոտեցում և հետապնդում են հետևյալ նպատակները.

- 1 կարգացնել Էկոհամակարգային ծառայությունների գնահատման և կառավարման յուրտում ԵՊՀ-ի և ԿՀԳԿ-ի կարողությունները,
- 2 ԵՊՀ Կառավարման մասնագիտությամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար մշակել «Էկոհամակարգային ծառայությունների կառավարում» դասընթաց,
- 3 հայաստանյան մակերևութային ջրային մարմինների համար մշակել Էկոհամակարգային ծառայությունների գնահատման շրջանակ:

EcoServ նախագիծը նպաստում է հասնել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից (ԿՉՆ) հետևյալ երեքին.

ԿՉՆ 4 Որակյալ կրթություն

ԿՉՆ 6 Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ

ԿՉՆ 15 Կյանքը ցամաքում: